

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՔՅՆ. ԽԻՉԱՆՑԻ

(1626 – 1663)

Յովհաննէս Խիչանցի որդին էր Յովհաննէս Քահանայի եւ Աշիլի։ Ունէր երկու եղբայրներ՝ Միքայէլ Քահանայ եւ Ամիրսէթ, եւ քոյր մը՝ Հռիփսիմէ։ Որդին կը կուսէր։ Սէթ։ Նշակերտած է Մինաս կրօնաւորին։ Առաւելապէս գործած է Երուսաղէմի մէջ, երբեմն այցի երթալով իր հայրենիքը, ուր կը տեսնենք զինքը երկիցըս, 1644ին, եւ 1649–50ին։

Իր 1656ին աւարտած Աւետարանին յիշատակարանին մէջ կու տայ սա շահեկան տեղեկութիւնները։ «Ի թվին ՌՀԴ [= 1625] եկայք ի սուրբ Երուսաղէմ եւ այսքան տարին զվանաց աւրհնութեան նամակներն կու գրէաք որ յամենայն երկիր կու յուղարկեն ի մխիթարութեան պատճառս. կա՛ որ ողորմութիւն է յուղարկած, թէ հասաւ ձեր ողորմութիւն, եւ կա՛ որ յորդորանք է վասորն սուր տանս դատաստանի, որ զան յերկրպագութիւն լուսաբուղիս սուրբ գերեզմանին եւ լո՛ւնայն սուրբ տնօրինականացո Քրիստոսի» (Աղանուռնի, Միաբանք, էջ 356։– Զեռ. Ս. Յ. Թ. 2351)։

Խիչանցի Յովհաննէս Քահանայի բազմադիրն զրչէն ու զրճինէն ծանօթ են երեսուն ձեռագիրներ։ Կը ներկայացնենք ժամանակագրական կարգով։

1. 1626, Երուսաղէմ, Ժողովածու, օրինակած է։– Զեռ. Ս. Յ. Թ. 2515։

2. 1627, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւետարան, օրինակած է։– Արարատ, 1905, էջ 732–3։

3. 1628, Երուսաղէմ, Խորհրդատետր։– Զեռ. Ս. Յ. Թ. 1829։

4. 1631, Երուսաղէմ, Աւետարան, գրած եւ ծաղկած է մահտեսի Տօնապետի համար։– Զեռ. Ս. Յ. Թ. 1945։

5. 1631, Երուսաղէմ, Հարցմանց Գիրք Գր. Տաթեւադիի, օրինակած է Ս. Փրկչի Վանքին մէջ, Դանիէլ Արեղայի համար։– Յուցակ Զեռ. Մշոյ, Թ. 71, էջ 66։

6. 1633, Երուսաղէմ, Ժողովածու, օրինակած է մահտեսի Մարկոսի համար։– Զեռ. Երեւանի, Թ. 1256։

7. 1633, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Մեկնութիւն Մատթէոսի՝ Գր. Տաթեւադիի։– Հանդիս Ամսօրեայ, 1892, էջ 113։

8. 1634, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւետարան, մասամբ օրինակած է, Դանիէլ Արեղայի համար, որ եւ կատարած է ծաղկումը։– Յուցակ Զեռ. Մշոյ, Թ. 74, էջ 70։

9. 1634, Երուսաղէմ, Աւետարան, օրինակած եւ ծաղկած է, Բաշրաթ Խարկաւազի համար։– Զեռ. Ս. Յ. Թ. 2659։

10. 1638, Երուսաղէմ, Յայտմաւուրք, օրինակած է Գրիգոր Պարոնտէր Պատրիարքի պատուէրով։– Զեռ. Ս. Յ. Թ. 1919։

11. 1639, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Մաշտոց, գրած եւ ծաղկած է։– Զեռ. Ս. Յ. Թ. 2175։

12. 1640, Երուսաղէմ, Աւետարան, օրինակած է Գրիգոր Պարոնտէր Պատրիարքի հրամանով։– Զեռ. Ս. Յ. Թ. 2639։

13. 1640, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւետարան, օրինակած եւ նկարազարդած է մահտեսի Խերէբի խնդրանքով։– Զեռ. Ս. Յ. Թ. 2668։

14. 1644, Հիդան, Աւետարան, օրինա-

կած եւ նկարագրուած է մահտեսի Խաւճա
Սարգսի համար։— Զեռ. Ս. Գ. Թ. 2631:

15. 1646, Ս. Ծնունդ, Բեթղէհէմ, Ճա-
ւոյց, օրինակած եւ նկարագրուած է՝ միջակ
արուեստով, Գանձակեցի Գր. Պատրիարքի
պատուէրով։— Զեռ. Ս. Գ. Թ. 15:

16. 1647, Աւետարան, օրինակած է ի Ս.
Ծնունդ, եւ նկարագրուած է Երուսաղէմի
մէջ, մահտեսի Յակոբի եւ իր հորօր Սիրու-
նի խնդրանքով։— Զեռ. Ս. Գ. Թ. 2596:

17. 1647, Երուսաղէմ, Նարեկ, դրած եւ
ծաղկած է։— Զեռ. Ս. Գ. Թ. 1438:

18. 1649, Հիզան, Աւետարան, Յովհանն-
նէս վարպետին համար, որ կը նուիրէ
զայն Երուսաղէմի Ս. Փրկչի Վանքին։—
Զեռ. Ս. Գ. Թ. 1969:

19. 1649, Հիզան, Մաշտոց, Յովհաննէս
վարպետին համար, որ նուիրած է զայն Ս.
Ծնունդեան Վանքին իրրեւ յիշատակ։— Զեռ.
Ս. Գ. Թ. 2203:

20. 1649, Հիզան, Մաշտոց, Յովհաննէս
վարպետին համար, որ նուիրած է զայն Ե-
րուսաղէմի Ս. Հրեշտակապետաց Վանքին
։— Զեռ. Ս. Գ. Թ. 2286:

21. 1650, Հիզան, Մաշտոց, օրինակած
է Հայրապետ Քահանայի համար։— Զեռ.
Երեւանի, Թ. 3904:

22. 1653, Բեթղէհէմ, Տօնացոյց-Շարա-
կան, օրինակած եւ ծաղկած է Ս. Ծնունդեան

Վանքին մէջ, իր որդւոյն Սէթի համար։—
Զեռ. Ս. Գ. Թ. 1403:

23. 1653, Ս. Ծնունդ, Տօնացոյց-Շարա-
կան, օրինակած է մասամբ։— Զեռ. Ս. Գ. Թ.
2652:

24. 1655, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւե-
տարան, զոր կ'աւարտէ 1656ին, եւ կ'ընծայէ
Բեթղէհէմի Ս. Ծնունդեան Վանքի Ս. Աստ-
ուածածին եկեղեցիին։— Զեռ. Ս. Գ. Թ.
2651:

25. 1658, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւե-
տարան, օրինակած եւ նկարագրուած է, եւ
նուիրած Ս. Աստուածածնի Գերեղմանին։—
Զեռ. Ս. Գ. Թ. 1549:

26. 1658, Երուսաղէմ, Տօնացոյց-Շարա-
կան, դրած եւ ծաղկած է։— Զեռ. Ս. Գ. Թ.
2103:

27. 1658, Երուսաղէմ, Աւետարան, օրի-
նակած եւ նկարագրուած է, եւ նուիրած Ս.
Փրկչի Վանքին։— Զեռ. Ս. Գ. Թ. 2608:

28. 1660, Երուսաղէմ, Աւետարան, օրի-
նակած է մահտեսի Մարիամի խնդրանքով։—
Զեռ. Ս. Գ. Թ. 2613:

29. 1661, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Շա-
րական, դրած եւ ծաղկած է Սիմէոն պարոն-
տէոսի պատուէրով։— Զեռ. Ս. Գ. Թ. 355:

30. 1663, Ս. Փրկչի, Երուսաղէմ, Աւե-
տարան, օրինակած եւ նկարագրուած է. Զե-
ռուդիւրը մնացած է առանց ստացողի։—
Զեռ. Ս. Գ. Թ. 2665:

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ